

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԲԵՐՅԱՐ ՈՒՏԻԵ

ՀՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ*

Հայերն առաջին ժողովություն եղան, որ քրիստոնեությունն ընդունեցին որպես պաշտոնական կրոն բյուզանդացիներից շատ առաջ: Այս տարի մենք տոնում ենք այդ հիմնարար իրադարձության 1700-ամյա տարեդարձը: Մեկ հարյուրամյակ անց՝ սկսված այդ գործն օժտվեց սեփական մի այբուրենով, որը Վերջնականապես ամրացրեց քրիստոնեությունը Հայաստանում: Հինգերորդ դարը դարձավ առաջին դարը մի գրականության, որը չարտահայտվեց միայն թարգմանություններով, այլ նաև ինքնորովն ստեղծագործությամբ և կոչվեց հայ գրականության «ոսկեդար»: Դրանցից հետո հայ գրականությունը բնակվ շնորհատվեց, ինչպիսին էլ որ եղան Հայաստանի իրարահաջորդ քաղաքական դժբախտ դեպքերը:

* Ֆրանսիայում հրատարակվող «Ծամաչենք Եկեղեցու Հայութին» եռամսյա հմադեսում, որի այս տարվա 81-րդ համարն ամրողապես Ավիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, համեստի զլանապոր խմբագիր Մարի-Աննա Վանին իր առաջնորդող հոդվածում նշում է. «2001 թվականը նշանապորվում է Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակով, ինչպես այդ հիշեցնում է մեզ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարած պաշտոնական այցելությունը Հոռովածությամբ: Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ Հայաստանը Տրդատ թագավորի կողմից հոչակվեց առաջին քրիստոնյա պետությունը: Հայ Եկեղեցին եղել է քրիստոնյա հմագույն Եկեղեցիներից մեկը, որը, ինչպես դպտական, ասորական Եկեղեցիները, պահպանել է քրիստոնեական սկզբանական պահպանությունները: Ահա այս Եկեղեցուն է, որ պիտի ծանոթանամ մեր ընթերցողները համեստին մոր-կա համարով: Մենք տարի առաջ մենք արդեն անդրադարձել էինք հայկական Պատարագին, հայութաբանական բնագրերի հայերն այս թարգմանություններին, ինչպես նաև հայ գրականության որոշ ուրվագներին: Այս անգամ և հաջորդաբար, իրենց կարևորության պատճառով, մենք մորից քննության պիտի առնենք հայութաբանական այն բնագրերը, որոնք, ինչպես Սուրբ Իրենեոսի «Ընդդեմ ներձվածողաց» գործի որոշ մասերը, պահպանվել են շնորհիվ հայերն այս թարգմանությունների: Պարունակությունը համապատասխան է Ամերիկայի Հայաստանի Ավիրված այս համարը կազմովն ու իրականացնողը, շոշափում է այս հարցը իր հաջորդական երկու հոդվածներով, ինչպես նաև ֆրամատիկ թարգմանությամբ ներկայացնում է Ամերիկայի հայութաբանությունը: Քրիստոնյա հմագույն պահպան մենք ճանապարհում ենք առաջնորդությունը»:

Հայոց այրութենի ստեղծման անմիջական նպատակն էր աստվածաշնչական գործերի թարգմանությունն ու տարածումը որքան ներքին քարոզչական կարիքների, նույնքան և եկեղեցական պաշտամունքի համար:

Հումարենից և ասորենից կատարված աստվածաշնչական գործերի թարգմանության հետ մեկտեղ թարգմանվեցին նաև աստվածաշնչական նույն գործերի մեկնությունները: Եվ սկսված այս գործնթացն այլևս չդադրեց մինչև հետհայրաբանական շրջանի մեկնությունների թարգմանությունը, ինչպես Կոռնելիոսի մեկնությունները, ու տակավին մինչև մեր օրերը, եթե մենք ներկա ենք լինում Եկեղեցու Հայրերի Ակատամար իսկական մի հետաքրքրական վերածննդի այնպիսի մի Եկեղեցում, ինչպիսին է իր ընթերցումների և ուսուցումների մեջ այսօր արդեն ազատ Հայատանայաց Եկեղեցին: Անտարակույս դժվար է գտնել մի Եկեղեցի, որ հենց իր սկզբնական շրջանից թարգմանած լինի աստվածաշնչական գործերի այդքան շատ մեկնություններ հունարենից և ասորենից (առաջին ներթին Սուրբ Եփրեմից և Սուրբ Հովհանն Ուկերերածից), ապա նաև արաբերենից, լատիներենից և այլն:

Բնականարար հայ ժողովրդի հծվարին և երեսն նույնիսկ ողբերգական պատմության ամբողջ ընթացքում եղել են գրական շատ գործեր, որոնք անհետ կորել են առանց նույնիսկ իրենց գոյությունն օգացնել տալու: Բայց կան նաև անհետացած զանձեր՝ գրված իրենց բնիկ լեզվով կամ որևէ այլ լեզվով (հայրաբանության մասնագետները լավ գիտեն այդ), որոնք պահպանված են հայերեն թարգմանությամբ: Հիշենք Հետիքիոս Երուսաղեմացու գրչին պատկանող Հորի գրքի մեկնությունը, Սուրբ Եփրեմ Աստրու «Գործ առաքելոց»-ի մեկնությունը և կամ Նանա (Νονποս) Մծրնացու՝ Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը:

Պատարագը, որի ընթացքում ընթերցվում և մեկնարանվում էին Սուրբ Գրքերը, ձևավորվել է Երուսաղեմի հունական Պատարագի հիմնա վրա: Հայր Շարլ Ռենուն, որը հրատարակել է Ծաղցի հնագոյն տարբերակը, ներկայում աշխատում է Շարակնոցի վրա, որն սկզբնապես հարմարեցված է եղել նույնպես պահեստինյան բնագրերին:

Հայերեն այս բոլոր թարգմանությունները շուտով ճանապարհ են բացում սեփական ստեղծագործությունների. նույն բանը կարելի է ասել նաև սրբախոսական, վանական և կանոնական բնագրերի համար, այնպես որ կարող ենք հաստատապես նշել, որ գրական բոլոր տեսակները իրենց արտահայտությունն են գտել հայերեն ինքնուրուց ստեղծագործությունների մեջ՝ ճառեր, մեկնություններ և աստվածաշնչական դրվագների շարքեր, պարականոն գրքեր, ուսուցողական բնույթի աստվածաբանական գրվածքներ, հորդորակներ, ներքումներ կամ հարցուապատասխաններ, վարդապետական թղթեր կամ նամականի, դավանաբանական ժողովածուներ, վանականների համար ասիմանված բարոյագիտական աշխատություններ, պատմություն, ժամանակագրություն, ընդհանրական թղթեր, սումարական աշխատություններ, եկեղեցական աշխարհագրություն, Պատարագի մեկնություններ, Դիոնիսիոսին վերագրված աշխատություններ, բանաստեղծություններ և տակավին ուրիշ տեսակներ, որ գուցե մոռանում են:

Հաճախ է նշվել, որ սահմանափակ բնակչություն ունեցող և մեծ ու հզոր տերություններով շրջապատված հայ ժողովորի գոյությունը միշտ էլ վտանգված է եղել: Դրա գրական հակազդեցությունն է հանդիսացել հիշողության մշակումը պատմական և ժամանակագրական այնպիսի երկրում, որոնք սահմանված են ապացուելու այդ ժողովորի աստվածային ընտրությունը (Օրա պատմությունը Աերթափանցված լինելով աստվածաբանությամբ) և տևականացնելու իրադարձությունների հիշատակը իրենց մեկնաբանությամբ հանդերձ: Այսպես է, որ Ազաթանգեղոսի երկը, որը դարձել է հայ ժողովորի՝ քրիստոնեության պաշտոնական դարձի «կանոնական» պատմությունը, իր մեջ ներառնում է մի «Հորդորակ»*, որը գրավում է գրքի կեսից ավելին: Հայոց հիմնաբորորդ դարը, հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի վարքից և Եզրիկի աստվածաբանական աշխատությունից հետո, հարուստ է պատմագիրներով. Ազաթանգեղոսից բացի հիշենք Փավստոս Բուզանդին, Եղիշեին, Ղազար Փարպեցուն:

Բացի այդ, պետք է ի նկատի ունենալ, որ միայն աստվածաբանները չեն (ինչպես Եզրիկը, որի ոգեշնչող անվերնագիր աշխատությունը հայտնի է «Եղծ աղանդոց» կամ «Վասն Աստուծոյ» անունով), որ խորապես ծանոթ են հումանական և ասորական հայրաբանությամբ, այլև Ազաթանգեղոսի Պատմության «Հորդորակի» ներկանակը, ինչպես նաև Ղազար Փարպեցին, որի Թուղթը, գրված 5-րդ դարի վերջում, պարունակում է Եկեղեցու բազմաթիվ Հայրերի մի ցուցակ: Այդ Թղթով նա պատվեր ստացավ գրելու իր «Պատմութիւն հայոց»-ը:

Այսպիսով, իր ստեղծման հենց սկզբից հայերեն հայրաբանական գրականությունը, լինի թարգմանական թե ինքնուրույն, փայլում է իր հորդ կենսունակությամբ: Որպես երախտագիտություն այն մեծ նպաստի, որ թարգմանիչ Հայրերը բերել են իրենց ժողովորին ու նրա հավատին, Հայ Եկեղեցին հաստատել է Սուրբ Թարգմանչաց հիշատակին Ավիրված կրոնական մի տոն: Զպետք է մոռանալ, որ հայ թարգմանչիչները հաճախ եղել են նաև ինքնուրույն հեղինակներ, ինչպես, օրինակ, Եզրիկը:

Լինելով հանդիպման կետ բազում ժողովուրդների, հատկապես ասորիների և հովանուրի միջև, հայերը հավասարակշռել են մեկնադական գործերից կատարած իրենց թարգմանությունները՝ մեծապես մայրենի լեզվի վերածելով Անսիոքյան դպրոցի հետինականների՝ Եփրեմի, Հովհանն Ուկերեանի, ապա նաև Թեոդորեսոս Կյուրացու մեկնությունները՝ առանց անտեսելու, սակայն, Ալեքսանդրյան դպրոցի գաճները՝ Փիլոնի և մանավանդ Կյուրեղ Ալեքսանդրացու աշխատությունները: Պաղեստինյան աշխարհը և ներկա է իր մեկնությունների, բայց հասկապես, ինչպես տեսանք, իր Պատարագի թարգմանությամբ:

Այս թարցում, բնականարար, իր նշանակությունն ունեցավ հայկական այրութեալի ստեղծումը՝ հիմնաբորորդ դարի սկզբին, քանի որ նախանիկիական Հայրերի գործերից ավելի շորորոր և հիմնաբորորդ դարերի Հայրերի գործերն էին, որոնք թարգ-

* Նկատի ունի «Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի» բաժինը (Խմբ.)

մանվեցին հայերն: Այսուհանդերձ, պետք չէ մոռացության մատնել կարևոր բացառությունները, ինչպիսիք են Իրենեոսը և Արա «ծոյցը առաքելական քարոզութեան» երկը կամ Հիպողիտոսի մենաւթյունները, որոնցից առաջինը պահպանված է միայն հայերենով, իսկ Հիպողիտոսի երկերը՝ հայերենով և հայերենից կատարված վրացերեն թարգմանությամբ:

Հայկական մեղում չի դադարել մեղոյ հավաքել հարևան բոլոր դաշտերում. Աա պատրաստել է այնպիսի մեղոյ, որի համը միմիայն իրեն է պատկանում:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այս տարի՝ 2001 թվականին, հայերը տոնում են Հայաստանում քրիստոնեության հոչակման 1700-ամյակը: Այս թվականը, բնականարար, մեծապես խորհրդաշական է երրորդ հազարամյակի սկզբին: Եթե Առյօնիսկ պատմաբանները վիճել են և դեռ կվիճեն այդ իրադարձության ճշգրիտ թվականի մասին՝ այն տեղադրելով չորրորդ դարի տարրեր թվականներին, մինչև 314 թվականը, երկու մեծ իրողություններ, սակայն, չեն կարող կասկած հարուցել: Հայաստանը առաջին թագավորությունը, առաջին պետությունն էր, որ պաշտոնավես դարձավ քրիստոնյա, և դա Բյուզանդական կայսրությունից առաջ: Ուստի սա մի տոնախմբություն է, որ անցնում է Հայաստան աշխարհի սահմաններից՝ ընդլիկելու համար ամբողջ քրիստոնյա աշխարհը:

Նոր քրիստոնյա դարձած այս թագավորությունը իր լեզվին հատուկ սեփական գրեր չուներ: Պետք էր սպասել ավելի քան հարյուր տարի, որպեսզի մինգերորդ դարի սկզբին պատշաճեցված մի այբուբեն թույլ տար հայերեն լեզվով գրի առնել աստվածաշնչական գրքեր, սուրբ Հայրերի տարրեր գրվածքներ և, առաջին հերթին, աստվածաշնչական գրքերի մենաւթյուններ: Այդ ժամանակ էլ ի հայտ պիտի գար քրիստոնյա աշխարհի, ինչպես և գրական աշխարհի ամենագրավիչ երևություններից մեկը. մի քանի տասնամյակում, տքնածան և հետևողական աշխատանքի շնորհիվ, քրիստոնյա հարևան ժողովուրդների ուշագրավ երկերը, ասորերեն և հունարեն լեզուներով, պիտի թարգմանվեին հայերեն: Եվ ինչքա՞ն թարգմանություններ կորսայան մատնվեցին բազում փորձությունների հետևանքով, որ ժամանակը չինայեց հայերին մինչև 1915 թվականի եղասպանությունը, որը նույն չինայեց ո՛չ մարդկանց, ո՛չ ձեռագրերին:

Այնպես որ (հայրաբաններին քաջ հայտնի է այս փաստը) սուրբ Հայրերի հունարեն և ասորերեն լեզուներով գրված մեծ թվով գրվածքներ, որոնց բնագրերը կորած էին, մեզ փոխանցվեցին հայերեն հին թարգմանություններով, դրանք լինեն Սուրբ Եփրեմ Աստրու մենաւթյունները կամ Սուրբ Իրենեոս Լուգդոնացու «ծոյցը առաքելական քարոզութեան» գործը՝ որպես օրինակ բերելով միայն այս երկուսը:

Իրենց թարգմանության հին թվականով հայերեն հայրաբանական բնագրերը հաճախ նաև թամկագին վկայություններ են անհետացած հունարեն բնագրի վիճակի մասին, որի համար շատ հաճախ մենք ունենք քանից վերանայված ուշ շրջանի

ձեռագրեր: Որպես դրա վառ օրինակ Ակատի ունեմք «Անդրեասի նահատակությունը» գրվածքը, որը հիշատակված է Վալենտինա Կալցոլարիի հոդվածում:

Հայերն իհարկեն շատ շուտով չպիտի բավարարվեին միայն թարգմանելով: Նրանք իրենք իսկ պիտի գոենին աստվածաշնչական մեկնություններ, ճաներ, աստվածաբնության ու ճգնությանը վերաբերող աշխատություններ, օրհներգեր, մարտիրունների և արբերի վարքեր, ինչպես նաև մեծ թվով պատմական երկեր:

Ինչ վերաբերում է Պատարագին, որանք նախընտրաբար պիտի դառնային դեպի քրիստոնեության պատմական կենտրոնը՝ Երուսաղեմ և Պաղեստին, որպեսզի այդտեղից ստանային դրա զիխավոր բնագրերը՝ տարեկան տոները բովանդակող տոնացուցն ու սուրբարական ընթերցվածները, Աստվածաշնչից քաղված երգեր, ապա, մի քիչ ավելի ուշ, քրիստոնեական օրիներգեր: Հայերի հյուսիսային հարեւանները՝ Վրացիները ևս հիմնգերորդ դարում թարգմանեցին Երուսաղեմի ժամագիրը, այնուհետև՝ շարականները: Այդ շարականների հունարեն բնագրերի բառացի թարգմանությունը կատարվեց Վրացիների կողմից, շարականներ, որոնք հունական արդի Պատարագի մեջ 95 տոկոսով փոխարինվեցին ավելի ուշ շրջամի հորինումներով, երբ հորինումների կենտրոն Երուսաղեմից տեղափոխվեց կոստանդնուպոլիս: Ահա այս թարգմանության շնորհիվ է, որ Հայու Շարլ Ռունուն կարողացավ ցուց տալ, որ հայերեն Շարականոցի հնագույն շերտը պատշաճեցումն էր Երուսաղեմի Պատարագի: Նա մեզ տալիս է այն բանի օրինակը, որ Պատարագի հայերեն և Վրացերեն բնագրերի մեջ կատարված գրեթե հնագիտական այդ պեղումները կարող են վերականգնել հիմնգերորդ դարի երուսաղեմական Պատարագը, որի բնագիրը կորած է հունարենում: Ավելի մանրամանությունների համար կարելի է դիմել նոր լուս տեսած գործ հնտուկալ աշխատությանը. «Les Hymnes de la Re'surrection 1. Hymnographie liturgique ge'orgienne. Introduction, traduction et annotation des textes du Sinai.» 18, Paris, Cerf, 2000.

Մնում է Հայաստանի քրիստոնեության պաշտոնական դարձի իրողությունը ներառնել հայ ժողովրդի պատմության ավելի ամբողջական մի փեսադաշտում նկատի առնելով Հայաստանում քրիստոնեության սկզբնավորումը նրա պաշտոնական դարձից առաջ մինչև մեր օրերը և հիշարակելով երեք մեծ իրադարձություններ՝ հայերեն այրութենի սփյուղումը հիմնգերորդ դարի սկզբին, Զաղկեղոնի ժողովի հակազդեցությունը և Էկումենիզմի հիմնահարցը:

Ֆրանսերենից թարգմանեց ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆԸ